

ՀՈՒԼԻՍ 2021

ԱՄՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





|   |           |
|---|-----------|
| <b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....         | <b>4</b>  |
| 1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում .....                   | 5         |
| 1.2. Ջրաչափերի տեղադրում և փոխարինում .....                       | 6         |
| 1.3. Ջրահեռացման համակարգ .....                                   | 7         |
| 1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....                          | 8         |
| 1.5. Էներգահամակարգ .....   | 8         |
| 1.6. Մեքենա-մեխանիզմներ .....                                     | 9         |
| <br>  |           |
| <b>2. Առևտրային տնօրինություններ</b> .....                        | <b>10</b> |
| 2.1. Բաժանորդների տվյալներ .....                                  | 11        |
| 2.2. Հասույթ .....  | 11        |
| 2.3. Գանձում .....  | 12        |
| 2.4. Դեբիտորական պարտքեր /Իրավաբանական վարչություն/ .....         | 13        |
| 2.5. Ջրաչափեր .....   | 14        |
| 2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում .....            | 15        |
| <br>  |           |
| <b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....                          | <b>16</b> |
| 3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....                    | 17        |
| 3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....                            | 18        |
| 3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....                    | 20        |
| 3.4. Ջրատար համակարգի բարելավում .....                            | 21        |
| 3.5 Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն .....       | 24        |
| 3.6 1-85 թեժ գիծ .....  | 25        |
| <br>  |           |
| <b>4. Լրատվական ծառայություն</b> .....                            | <b>26</b> |
| <br>  |           |
| <b>5. Որակի, առողջության և անվտանգության բաժին</b> .....          | <b>29</b> |
| 5.1. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ .....         | 30        |
| 5.2. Դասընթացներ/սեմինարներ .....                                 | 30        |
| 5.3. ԱԲ մասով համագործակցություն լիազոր մարմինների հետ .....      | 31        |
| 5.4. Ռիսկերի հայտնաբերում/Մեղմացնող միջոցառումների կիրառում ..... | 32        |
| <br>  |           |
| <b>6. Համակազմային ցանց և սերվերային համակարգ</b> .....           | <b>33</b> |

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ  
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Հարավ» ՇՏ սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարադրոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

### Մարզ Արմավիր

● **Քաղաք Էջմիածին.** Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եկեղեցական համալիրի ջրամատակարարումն իրականացվում էր քաղաքի Խորենացու փողոցում գտնվող, ջրի ցածր ճնշում ունեցող  $d=300$ մմ ջրագծից  $d=63$ մմ պոլիէթիլենային խողովակներով: «Էջմիածին» տեղամասի աշխատակիցների կողմից Բաղրամյան փողոցի  $d=160$ մմ պոլիէթիլենային ջրագծից կատարվել է նոր միացում և կառուցվել է  $d=90$ մմ  $L=90$ գծ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով ջրագիծ: Իրականացված աշխատանքների արդյունքում բարելավվել է համալիրի ջրամատակարարումը:



### Գյուղ Ծաղկալանջ

● Ծաղկալանջ գյուղի ջրամատակարարումն իրականացվում էր  $d=300$ մմ պողպատե ջրագծից  $d=63$ մմ- $75$ մմ  $L=1700$ գծ/մ ընդհանուր երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով: Ջրի թողունակությունը կազմում էր մոտ 4լ/վրկ / բարձր ճնշումների դեպքում/, ինչը չէր ապահովում գյուղի նորմալ ջրամատակարարումը: Տեղամասի աշխատակիցների կողմից  $d=300$ մմ պողպատե խողովակից կատարվել է միացում, միացման կետում տեղադրվել է  $d=100$ մմ փական և կառուցվել է  $d=110$ մմ  $L=1000$ գծ/մ երկարությամբ նոր ջրագիծ՝ 7-8լ/վրկ ջրի թողունակությամբ, ինչի արդյունքում գյուղի ջրամատակարարումը կարգավորվել է:



### Մարզ Արագածոտն

● Աշտարակ տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Ագարակ գյուղի  $d=300$ մմ Խերեսի թուջե ջրագիծը, որն անցնում էր դաշտերով և սեփականություն հանդիսացող տարածքներով, գտնվում էր քայքայված վիճակում, առկա էին ապօրինի միացումներ և ջրակարուստներ: «Աշտարակ» տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել է նոր  $d=110$ մմ  $L=100$ գծ/մ ջրագիծ, որի միացումն իրականացվել է





Ղազարավանի ջրագծից, և թվով 5 խոշոր սպառողների ջրագծերը վերամիացվել են նոր կառուցված ջրագծից: Իրականացված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է  $d=300$ մմ  $L=700$ գծ/մ թուջե վթարային ջրագիծը, բացառվել են ապօրինի միացումները և խնայվել է մոտ 6լ/վրկ ջրաքանակ:

Հուլիս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

| Կատարված աշխատանքները  | Չափման միավոր | Քանակ |
|--|---------------|-------|
| Չափում հոսքաչափով  | տեղ           | 5788  |
| Որոնում խողովակափնտրիչ սարքով                                | մ             | 30450 |
| Հոսակորուստի որոնում ակվաֆոնով                               | մ             | 30050 |
| Հոսակորուստի որոնում կորեյատորով                             | մ             | 13810 |
| Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում | հատ           | 6     |
| Շահագործումից հանված ջրագիծ                                  | մ             | 1801  |
| Կառուցված ջրագիծ   | մ             | 4554  |
| Կառուցված կոյուղագիծ   | մ             | 347.5 |
| Վերացված գաղտնի վթարներ                                      | հատ           | 36    |
| Փոխարինված փական   | հատ           | 65    |
| Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց                    | հատ           | 611   |
| Մաքրված դիտահոր  | հատ           | 1105  |
| Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ       | լ/վ           | 18.9  |
| <b>Վերացված վթարներ</b>                                      |               |       |
| Ջրամատակարարման ցանցում                                      | հատ           | 1536  |
| Ջրահեռացման ցանցում  | հատ           | 2702  |
| Պոմպակայաններում   | հատ           | 0     |
| Մաքրված անձրևընդունիչ  | հատ           | 540   |

Հուլիս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

|          | Պոլիէթիլենային խողովակներ (հատ) | Մետաղական խողովակներ (հատ) | Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ |
|----------|---------------------------------|----------------------------|---|
| Ընդամենը | 808                             | 1203                       | 519   |

## 1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հուլիս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

| Կատարված աշխատանքներ | Ջրաչափի տրամագիծ, մմ |    |    |    |    |    |    |    |     | Ընդամենը |
|----------------------|----------------------|----|----|----|----|----|----|----|-----|----------|
|                      | 15                   | 20 | 25 | 32 | 40 | 50 | 65 | 80 | 100 |          |
| Տեղադրված            | 288                  | 7  | 2  | 2  | 5  | 3  | 0  | 0  | 0   | 307      |
| Փոխարինված           | 324                  | 12 | 9  | 2  | 2  | 2  | 0  | 1  | 1   | 353      |
| Տեղափոխված           | 0                    | 0  | 0  | 0  | 0  | 0  | 0  | 0  | 0   | 0        |
| Տեխ. ակտ             | 299                  | 21 | 3  | 6  | 2  | 4  | 1  | 1  | 0   | 337      |
| Ընդամենը             | 911                  | 40 | 14 | 10 | 9  | 9  | 1  | 2  | 1   | 997      |

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 997 ջրաչափ: Կատարված աշխատանքների 91 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

### 1.3. ՋՐԱՇԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հուլիս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

| h/h | Տեղամասի անվանումը | Կոյուղագծերի լվացում | Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ | Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ |
|-----|--------------------|----------------------|--|---|
| 1   | Արարկիր            | 1275                 | 304  | 54  |
| 2   | Մաշտոց             | 1790                 | 240  | 36  |
| 3   | Շահումյան          | 1445                 | 171  | 20  |
| 4   | Զեյթուն            | 460                  | 234  | 0   |
| 5   | Շիրակ              | 1840                 | 537  | 31  |
| 6   | Արթիկ              | 0                    | 96   | 66  |
| 7   | Ապարան             | 0                    | 30   | 0   |
| 8   | Ալավերդի           | 2230                 | 19   | 12  |
| 9   | Աշոցք              | 70                   | 3  | 0   |
| 10  | Բերդ               | 0                    | 12   | 0   |
| 11  | Իջևան              | 1450                 | 51   | 0   |
| 12  | Լոռի               | 3590                 | 233  | 0   |
| 13  | Նոյեմբերյան        | 170                  | 16   | 12  |
| 14  | Սպիտակ             | 250                  | 22   | 0   |
| 15  | Ստեփանավան         | 1755                 | 32   | 22  |
| 16  | Թալին              | 0                    | 18   | 0   |
| 17  | Տաշիր              | 590                  | 17   | 0   |
| 18  | Էջմիածին           | 0                    | 120  | 4   |
| 19  | Չարենցավան         | 880                  | 107  | 1.5   |
| 20  | Արովյան            | 3480                 | 75   | 0   |
| 21  | Հրազդան            | 3820                 | 152  | 0   |
| 22  | Աշտարակ            | 2840                 | 14   | 4   |
| 23  | Կենտրոն            | 290                  | 223  | 30  |
| 24  | Հյուսիս            | 2970                 | 204  | 41  |
| 25  | Հարավ              | 1460                 | 324  | 0   |
| 26  | Էրեբունի           | 425                  | 144  | 36  |
| 27  | Արմավիր            | 6573                 | 109  | 0   |
| 28  | Արտաշատ            | 2400                 | 110  | 4   |
| 29  | Էջմիածին           | 0                    | 101  | 0   |
| 30  | Աշտարակ            | 0                    | 38   | 0   |
| 31  | Արարատ             | 1445                 | 63   | 0   |
| 32  | Մասիս              | 836                  | 37   | 0   |
| 33  | Գավառ              | 0                    | 23   | 0   |
| 34  | Սևան               | 2770                 | 88   | 0   |
| 35  | Մարտունի           | 30                   | 21   | 0   |
| 36  | Վարդենիս           | 0                    | 9  | 0   |
| 37  | Ճամբարակ           | 0                    | 16   | 0   |
| 38  | Դիլիջան            | 440                  | 40   | 30  |
| 39  | Վայք               | 220                  | 7  | 0   |
| 40  | Եղեգնաձոր          | 0                    | 17   | 6   |
| 41  | Զերմուկ            | 0                    | 34   | 0   |
| 42  | Սիսիան             | 0170                 | 88   | 9   |
| 43  | Գորիս              | 50                   | 39   | 9   |
| 44  | Կապան              | 150                  | 76   | 0   |
| 45  | Մեղրի              | 0                    | 25   | 0   |
|     | Ընդամենը           | 48164                | 4339   | 427.5   |

## 1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. Սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Սևանի N3 և N5 կեղտաջրերի պոմպակայանում կատարվել է պոմպերի սպասարկում, որի արդյունքում փոխարինվել են բոլոր պոմպերի յուղերը, ստուգվել է հովացնող հեղուկների պարունակությունը: Ստուգվել է նաև պոմպերի և մալուխների հերմետիկությունը, ինչպես նաև էլեկտրական սարքավորումները:

- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանում խցանվել էր մանր ճաղավանդակի ցանցը և քերիչ սանրերը ամբողջությամբ փաթաթվել էին թելերով, որի արդյունքում կեղտաջուրը այլևս չէր անցնում ճաղավանդակի միջով: Արդյունքում մաքրվեց վերոնշյալը և այժմ մաքրման կայանն աշխատում է բնականոն ռեժիմով:

- Երևանի կեղտաջրերի մաքրման կայանում ոռոգման ցանցի որոշ հատվածներ խցանվել էին և ոռոգման ջուրը չէր հասնում անհրաժեշտ վայրեր: Արդյունքում այդ խողովակները կտրվեցին, մաքրվեցին կուտակված ժանգից և եռակցվեցին, որի արդյունքում ցանցն այժմ աշխատում է բնականոն ռեժիմով:

- Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

| h/h | Գտնվելու վայրը | Կառույցի անվանումը | Մղված կեղտաջրերի ծավալը<br>մ <sup>3</sup> | Մաքրված կեղտաջրերի ծավալը<br>մ <sup>3</sup> | Կեղտաջրից առանձնացած կեղտ<br>տ |
|-----|----------------|--------------------|---|---|--------------------------------|
| 1   | ք. Գավառ       | «Գավառ» ԿՄԿ        | 0   | 64,148                                      | 19,8                           |
| 2   | ք. Մարտունի    | «Մարտունի» ԿՄԿ     | 0   | 77,398                                      | 23,4                           |
| 3   | ք. Վարդենիս    | «Վարդենիս» ԿՄԿ     | 0   | 158,059                                     | 5,4                            |
| 4   | ք. Ջերմուկ     | «Ջերմուկ» ԿՄԿ      | 0   | 147,047                                     | 10,8                           |
| 5   | ք. Դիլիջան     | «Դիլիջան» ԿՄԿ      | 0   | 136,784                                     | 19,8                           |
| 6   | ք. Սևան        | «Սևանի» N3 պ/կ     | 18,026                                    | 0   | 0                              |
| 7   | ք. Սևան        | «Սևանի» N5 պ/կ     | 12,400                                    | 0   | 0                              |
| 8   | ք. Գավառ       | «Գավառ» պ/կ        | 9,700                                     | 0   | 0                              |
| 9   | ք. Վարդենիս    | «Վարդենիս» պ/կ     | 19,100                                    | 0   | 0                              |
| 10  | ք. Ջերմուկ     | «Ջերմուկ» պ/կ      | 5,592                                     | 0   | 0                              |

## 1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:



| Աշխատանքների նկարագիրը                 | Քանակ |
|--|-------|
| Պոմպի աշխատանքի գնում և կարգավորում    | 93    |
| Էլեկտրական սարքերի գնում և կարգավորում | 23    |
| Այցեր                                  | 6     |
| Պոմպի տեղադրում                        | 3     |
| Պոմպի ապամոնտաժում                     | 1     |
| Պոմպի վերանորոգում                     | 2     |
| Էլեկտրական հոսանքի լարերի նորոգում     | 1     |

## 1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Հուլիս ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար հուլիս ամսվա ընթացքում նորոգվել են թվով 3 մեքենայի շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 2 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 6 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփսեր, առանցքակալներ, կիսատնիներ, խտաբուկեր, մանեկներ, սաստելիտներ:

Թվով 23 անվադող նորոգվել է, փոխարինվել և հավասարակշռվել է:

Փոխարինվել են թվով 58 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, անտիֆրիզ և քսայուղեր:



Թվով 2 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:



Թվով 11 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ: Վերանորոգվել են թվով 3 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամումի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Թվով 3 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Նորոգվել է թվով 4 մեքենայի փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփսերը, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Թվով 5 մեքենայի վրա իրականացվել է գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 8 մեքենա-մեխանիզմի վրա:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 7 մեքենայի վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 10 մեքենայի վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.08.2021թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 553,575 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

| Տնօրինություն | Սպառողներ        | 2021թ. հունիս ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ | Կնքված պայմանագրերի քանակը | %    |
|---------------|------------------|---|----------------------------|------|
| Առևտրային     | Բնակիչ-բաժանորդ  | 653,510   | 529,390                    | 81,0 |
|               | Իրավաբանական անձ | 29,594  | 23,982                     | 81,0 |

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

| Տնօրինություն | Սպառողներ        | Բաժանորդների ընդհանուր քանակ | Ծախսող բաժանորդների քանակ | %    |
|---------------|------------------|------------------------------|---------------------------|------|
| Առևտրային     | Բնակիչ-բաժանորդ  | 727,776                      | 565,112                   | 77,6 |
|               | Իրավաբանական անձ | 34,890                       | 25,217                    | 72,3 |

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 506 նոր բաժանորդ:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հուլիս ամսվա ընթացքում ստուգաչափվել է 3502 ջրաչափ:

| Տնօրինություն | Սպառողներ        | Մարքին | Անսարք | Միջամտած | Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 07.2021 |
|---------------|------------------|--------|--------|----------|---|
| Առևտրային     | Բնակիչ-բաժանորդ  | 1371   | 1630   | 322      | 3323                                    |
|               | Իրավաբանական անձ | 69     | 94     | 16       | 179                                     |
|               | Ընդամենը         | 1440   | 1724   | 338      | 3502                                    |

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ հուլիս ամսին փոխարինված 3502 ջրաչափերի մոտ 59%-ը (կամ 2062 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 183,073 մ<sup>3</sup> հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2021թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ:

Հասույթ



### 2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր ցուցանիշ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Հուլիս ամսին գանձումը կազմել է 2,089 մլն դրամ (96%):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում մինչև 2020թ. ապրիլ ամիսը, կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝



փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսագանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը հուլիս ամսին զերծ է մնացել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ SMS-հաղորդագրությունների): Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

## 2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Հուլիս ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 127 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 13,3 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

| Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական |            | Բավարարված |           | Մերժված |          | 2017-2021թթ. ընթացիկ գործեր |           | ԴԱՀԿ ներկայացված գործեր |           |
|---|------------|------------|-----------|---------|----------|-----------------------------|-----------|-------------------------|-----------|
| քանակ   | գումար     | քանակ      | գումար    | քանակ   | գումար   | քանակ                       | գումար    | քանակ                   | գումար    |
| 10714   | 1492857565 | 7225       | 754200676 | 158     | 20991281 | 3331                        | 717665608 | 4189                    | 373993924 |


Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 67 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 1 %-ը մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

| Տնօրինություն        | Պարտքը 01.08.2021թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ) | Այդ թվում նոյեմբեր ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ) |
|----------------------|--|---|
| Առևտրային, այդ թվում | 8,483  | 2,383   |
| Բնակիչ-բաժանորդներ   | 6,250  | 1,575   |
| Իրավաբանական անձեր   | 2,233  | 808   |

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՍ սպասարկման տարածքում շուրջ 272.1 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:



## 2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.08.2021թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

| Տնօրինություն | Սպառողներ     | Բնակիչ-բաժանորդներ |                   |       | Բրավարանական |                   |       |
|---------------|---------------|--------------------|-------------------|-------|--------------|-------------------|-------|
|               |               | Ընդամենը           | Այդ թվում՝ ծախսող | %     | Ընդամենը     | Այդ թվում՝ ծախսող | %     |
| Առևտրային     | Ջրաչափով      | 694,220            | 563,462           | 81.16 | 33,757       | 25,209            | 74.68 |
|               | Առանց ջրաչափի | 33,556             | 1,650             | 4.92  | 1,133        | 8                 | 0.71  |

Տվյալների բազայում 01.08.2021թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

| Տնօրինություն | Բնակիչ-բաժանորդներ      |                      |       | Բրավարանական            |                      |       |
|---------------|-------------------------|----------------------|-------|-------------------------|----------------------|-------|
|               | Գործող ջրաչափերի քանակը | Այդ թվում՝ ժամկետանց | %     | Գործող ջրաչափերի քանակը | Այդ թվում՝ ժամկետանց | %     |
| Առևտրային     | 866,351                 | 387,683              | 44.75 | 37,677                  | 10,417               | 27.65 |

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում՝ թաղամասային ծրագրով) շուրջ 4754 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1127 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

| Հասցե                      | Ջրաչափերի ընդհանուր քանակ | Տեղադրված ջրաչափերի քանակ | %    |
|----------------------------|---------------------------|---------------------------|------|
| գ.Քասախ                    | 2343                      | 1918                      | 81.7 |
| գ.Պոռշյան                  | 1580                      | 1050                      | 66.2 |
| ք.Հրազդան, միկրոշրջան թաղ. | 5882                      | 1834                      | 32.1 |

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիրը: Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 9288, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 8477, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 1276, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1994, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1190, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1718 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3694 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը ջրազրկում իրականացնելու նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում: Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից: Հայտնաբերված և արձանագրված խախտումների քանակի նվազումը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ պայմանավորված է նաև երկրում տիրող, վերը նշված իրավիճակների հետ:

| Տնօրինություն | Քանակ | Խ.մ.    | Գումար (ՀՀ դրամ) |
|---------------|-------|---------|------------------|
| Առևտրային     | 396   | 223,989 | 36,849,959       |

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




### 3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ




Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի հուլիս ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 96.5%, ինչը 0.3% ավել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 55 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.



Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արգնի 1, Արգական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2021թ-ի հուլիս ամսին, 2020 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 70 լվ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 746 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկներում.




### 3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

#### Ուսումնասիրված հասցեներ


- Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է 178 հասցե: «ՀԷՅ» ՓԲ ընկերությունից ձեռք է բերվել 4 տեխ. պայման
- Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների էլ. էներգիայի ծախսը նվազել է 1567,67 կՎտ/ժ 7% անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

#### Էջմիածին



- Գյումրի քաղաքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 2724 կՎտ/ժամ 7,5% անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

#### Շիրակ




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է 272 հասցե: Ընկերության էլ. էներգիայի ծախսից հանվել է «Բյուրեղավան» տեղամասի վրա նախկինում կատարված 1500 կՎտ.ժ հավելագրումը:


- Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 69,46 ԿՎտ.ժ կամ 0.4% անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

### Էջմիածին



● Գյումրի քաղաքում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 3025 ԿՎտ/ժ կամ 11,3 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

### Շիրակ




### Կատարված աշխատանքներ

● Թվով 37 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 28 պոմպակայաններում վերացվել են հայտնաբերված թերությունները:

### Ինվերտորների տեղադրում

● Հինգ հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փախարհնվել են ինվերտորային համակարգով:

● Տեղադրված ինվերտորային պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, ավելացել է 948,1 ԿՎտ.ժ կամ 1,64%:




### Խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 88 խոշոր պոմպակայաններում էլ.մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:

Հուլիս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 734, 915 ԿՎտ/ժամ (22.49%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:




Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 219,205 ԿՎտ.ժ/ամիս կամ 8,15 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 1 069 660 ԿՎտ.ժ կամ 15,01 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոյիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են հուլիս ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

| Աշխատանքի անվանում   | Չ/Մ   | Քանակ |
|--|-------|-------|
| Կոյուղու վերաբերյալ վթարավերականգնողական աշխատանքների կողմավորում        | հատ   | 12    |
| Ծաղկահովիտ գյուղի կոյուղագծերի թվայնացում                                | կմ    | 2.04  |
| Երևան քաղաքի հիդրանտների վերաբերյալ տվյալների բազայի լրացում և ճշգրտում  | քաղաք | 1     |
| Լոռու մարզի քաղաքների և Մեծ Պատնի գյուղի համար տվյալների բազայի ստեղծում | քաղաք | 3     |
| USZ-ում  |       |       |
| Լեռնագոգ գյուղի տվյալների բազայի ստեղծում և ճշգրտում                     | USZ   | 1     |
| Տեխնիկական պայմանների թվայնացում   | գյուղ | 1     |
| Պլանային ջրանջատում  | հատ   | 124   |
|  | հատ   | 4     |



| <i>Աշխատանքի անվանում</i>   | <i>Չ/Մ</i> | <i>Քանակ</i> |
|---|------------|--------------|
| Արագածոտնի մարզի Մուղնի և Ոսկեվազ գյուղերում գտնվող ջերմոցների տեղադիրքերի թվայնացում   | հատ        | 2            |
| Արագածոտնի մարզի համայնքների վերաբերյալ տեղեկատվական բազաների միավորում մեկ ընդհանուր տեղեկատվական բազայում   | մարզ       | 1            |
| Գյուղերի և համայնքների թեմատիկ շերտերի թվայնացում և տվյալների բազայի լրացում  | հատ        | 35           |
| Դիլիջան քաղաքի տարածական տվյալների ուղղումներ   | քաղաք      | 1            |
| Գյումրի քաղաքի ջրային ցանցի և ջրատարների միացումների, ՃԿՓ-ների տեղադիրքերի, հոսքաչափերի տեղադիրքերի փակ փականների ճշտագրում և տվյալների բազայի ստեղծում | քաղաք      | 1            |
| Կենտրոն տեղամասի վթարների քարտեզագրում և մուտքագրում ԱՏՀ տվյալների բազա   | վթար       | 128          |
| Արագածոտն, Կոտայք, Արարատ և Տավուշ մարզերում գտնվող ջրաղբյուրների, ՕԿՁ-ների, պոմպակայանների և քլորակայանների սանիտարական գոտիների քարտեզագրում          | մարզեր     | 4            |
| ՀՀ ջրային ցանցի տվյալների բազայի միավորման համար տվյալների բազայի ձևաչափի մշակում   | բազա       | 1            |
| ՕԿՁ ներքի, տեղադիրքերի և սխեմաների վերաբերյալ ԱՏՀ տվյալների բազայի ստեղծում՝ ըստ տրամադրված գույքի վարձակալման վկայականների                             | բազա       | 1            |
| ԱՏՀ տվյալների փոխանակման և տվյալների բազայի կառավարման վերաբերյալ կանոնակարգերի և ընթացակարգերի մշակում   | մշակում    | 1            |
| Բազայում նոր ֆիզիկական կետերի ավելացում   | կետեր      | 298          |
| «Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում Վանաձորում  | բաժանորդ   | 72           |
| «Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում Վանաձորում   | բաժանորդ   | 5606         |
| «Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում Երևանում   | բաժանորդ   | 1539         |
| Բազայում նոր իրավաբանական կետերի ավելացում  | կետեր      | 35           |

### 3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը:

#### Արարատյան ջրատար

Ջրատարի վրա առաջացել էին վթարներ, որոնք վերացնելուց հետո տնտեսվել է  $\approx 30$ լ/վ ջրաքանակ:



#### Արտաշավանի ջրատար

Կազմակերպվել են ջրատարի և կապտաժների շրջայցեր, որոնց ժամանակ կապտաժներում հայտնաբերվել են թերություններ: Դրանք տեղում վերացվել են, ինչի արդյունքում քաղաք Աշտարակ մատակարարվող ջրաքանակն ավելացել է 15լ/վ-ով:

#### Արգական-Խարբերդ ջրատար

Ջրատարի վրա՝ Արգականի հոսքաչափի մոտ, առաջացել է վթար՝ 250լ/վ: Ջրատարը ջրագրկվել է, իսկ վթարված հանգույցը վերականգնվել է:

Հաշվետու ամսվա ընթացքում կատարվել են նաև ջրաչափման, ջրաքանակների կարգավորման աշխատանքներ:



## Քաղաք Գյումրի

Ուսումնասիրությունն է կատարվել Գյումրի քաղաքի Շինարարների փողոցում, որտեղ ՎՋԵԲ ծրագրով իրականացվում են փողոցաշինական աշխատանքներ: Փողոցում շին. աշխատանքների ընթացքում հայտնաբերվել էին հին, չգործող  $D=100$ մմ և  $D=50$ մմ պողպատե ջրագծեր: Ուսումնասիրության արդյունքում միացման կետերից խցափակման եղանակով շահագործումից հանվել են  $D=100$ մմ,  $L=320$ մ և  $D=50$ մմ,  $L=330$ մ պողպատե ջրագծեր: Տնտեսվել է  $Q \approx 2-3$  լ/վ ջրաքանակ:



**Գյուղ Գագարինավանում** ուսումնասիրություններ կատարելիս, մինչև բաժանման հանգույց հասնելը հայտնաբերվել է ՊԷ  $D=160$ մմ տրամագծով անհայտ միացում: Նշված ջրագծով անցնող փաստացի ջրաքանակը կազմել է  $Q \approx 3.5$  լ/վ: Սևան ՇՏ աշխատակիցների կողմից նշված ջրագիծը խցափակվել է:

**Լճաշեն-Սևան ջրատարի** վրա կատարված ուսումնասիրությունների արդյունքում Վարսեր գյուղի մոտակայքում հայտնաբերվել է 500 մմ ջրատարին միացված  $D=40$ մմ պ/ե անհայտ միացում, որը խցափակվել է Սևան ՇՏ աշխատակիցների կողմից:



## Քաղաք Վանաձոր

● Պարբերաբար կրկնվող վթարներից խուսափելու համար անհրաժեշտ եղավ փոխարինել Վանաձոր քաղաքի Ծատուրյան 59 տան մոտով անցնող ջրագիծը: Հետագա շահագործումն անխափան կազմակերպելու համար փոխարինվել է  $D=40$ մմ,  $L=20$ մ խողովակ: Արդյունքում տնտեսվել է  $Q = 1$  լ/վ ջրաքանակ:


● Կառուցված լինելով դեռ ԽՍՀՄ տարիներին՝ Վանաձոր քաղաքի Գրիբոյեդով 1 շենքի վթարված մուտքագիծն անհրաժեշտ եղավ փոխարինել: Հետագա շահագործումն անխափան կազմակերպելու համար փոխարինվել է  $D=40$ մմ,  $L=15$ մ ջրագիծ և արդյունքում տնտեսվել է  $Q = 1$  լ/վ ջրաքանակ:






## Քաղաք Իջևան

● Քաղաք Իջևանում փոխարինվել է Բլբուլյան 73 շենքի՝ հաճախակի վթարվող  $D=50$ մմ պողպատե ջրագիծը նույն տրամագծի ՊԷ ջրագծով  $L=55$ մ (ընդհանուր մուտքագծերով): Արդյունքում տնտեսվել է  $Q = 1,5$ լ/վ ջրաքանակ:




## Քաղաք Երևան

● Շենգավիթ տեղամասում կատարած ուսումնասիրությունների արդյունքում Տարոնցի փողոցում (Երևանի Մետրոպոլիտենի դիմաց) հայտնաբերվել են 2 գաղտնի վթար: Վթարները վերացվել են՝ խցափակելով 1 վթարված  $D=40$ մմ միացում: Արդյունքում տնտեսվել է  $Q=1.5$ լ/վ ջրաքանակ:




● Մաշտոց տեղամասում կատարած վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար «Արաքս» ՕԿՋ-ի տակ, գերեզմանների մոտ գտնվող  $D=600$ մմ պողպատե ջրատարի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q=4$ լ/վ ջրաքանակ:

● Մաշտոց տեղամասում վթար է հայտնաբերվել նաև Լուկաշին փողոց 62 տան դիմացով անցնող  $D=150$ մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q = 7$ լ/վ ջրաքանակ:



● Կենտրոն ՇՏ կատարած վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Մայաթ-Նովա-Ալեք Մանուկյան խաչմերուկում (Չարենցի գոտի) գտնվող թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q=8$ լ/վ ջրաքանակ:


● Շահումյան տեղամասում կատարած ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Մեծարենց փողոց 57 տան դիմաց: Կտրվել և խցափակվել է D=25մմ վթարված պողպատե, անհայտ ջրագիծ: Արդյունքում տնտեսվել է Q=4լ/վ ջրաքանակ:



### 3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● **Քաղաք Կապանի «Չանախչի»** խմելու ջրի մաքրման կայանում փոխարինվել է 50մ երկարությամբ քլորաջրի տրման քայքայված d=32մմ տրամագծի խողովակաշարը՝ d=25մմ, որը թույլ կտա բացառել քլորաջրի կորուստը:



● **Քաղաք Մեղրիի «Զվար»** խմելու ջրի մաքրման կայանում լվացվել և ախտահանվել է W=500 խ/մ տարողությամբ ջրամբարը, որը կապահովի բնակավայրին տրվող խմելու ջրի որակը:


● **Քաղաք Բերդի «Բերդ»** խմելու ջրի մաքրման կայանում լվացվել և ախտահանվել է W=400 խ/մ տարողությամբ կոնտակտային ջրամբարը, որը նույնպես թույլ կտա ապահովել բնակավայրին տրվող խմելու ջրի որակը:

● **Քաղաք Դիլիջանի «Բլդան»** խմելու ջրի մաքրման կայանի W=4X750 խ/մ տարողությամբ նախնական պարզարանը մաքրվել է ջրաբերուկներից, որն ապահովելու է բնակավայրին տրվող խմելու ջրի որակը:



● **«Ֆրոլով»** ՋՄԿ-ում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար տեղադրվել է ALLDOS փական:

● **«Բերդ»** ՋՄԿ-ում իրականացվել է հեղուկ քլորի համակարգի «Գրունդֆոս» 4կգ/ժ արտադրողականությամբ վակուում կարգավորիչի վերանորոգում, ինչը կապահովի հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:



● **Ֆրոլով»** ՋՄԿ-ում իրականացվել է հեղուկ քլորի համակարգի «Գրունդֆոս» 4կգ/ժ արտադրողականությամբ վակուում կարգավորիչի վերանորոգում:



- **Քաղաք Մասիսի** Արարատյան 3/4 քլորակայանում վերացվել է 4-րդ հերթի քլորաջրի խողովակի վթարը:



### 3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 43705 զանգ, որից առևտրային բնույթի զանգերը՝ 11810: Երևան քաղաքի համար եղել է 9328 զանգ:
- Հուլիս ամսվա Երևանի ցուցանիշը կազմել է 79,0%, իսկ մարզերի ցուցանիշը՝ 2482 զանգ (21.0%): Շահագործման վերաբերյալ ստացվել է 31895 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 22670 զանգ (71.1%), իսկ մարզերինը՝ 9225 զանգ (28,9%):

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր

|                    |                            | Մտորաբաժանում |                 |
|--------------------|----------------------------|---------------|-----------------|
| <b>Առևտրային</b>   | <b>Ընդամենը</b>            |               | <b>11810</b>    |
|                    | <b>ԵՐԵՎԱՆ</b>              |               | <b>9328</b>     |
|                    | <b>ՄԱՐԶԵՐ</b>              |               | <b>2482</b>     |
| <b>Շահագործում</b> | <b>ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ</b>         |               | <b>31895</b>    |
|                    | ԱՐԵՎԵԼՔ                    |               | <b>12443</b>    |
|                    | Շենգավիթ                   |               | <b>1679</b>     |
|                    | Կենտրոն                    |               | <b>2585</b>     |
|                    | Հյուսիս(Ավան, Նոր Նորք)    |               | <b>2095</b>     |
|                    | Էրեբունի                   |               | <b>2164</b>     |
|                    | <b>Պոմպ</b>                |               | <b>508</b>      |
|                    | Մարզեր                     |               | <b>3412</b>     |
|                    | այդ թվում Կոյուղու վթար    |               | <b>47</b>       |
|                    | այդ թվում Դիտահորի խցանում |               | <b>2431</b>     |
|                    | <b>ԱՐԵՎՍՏՈՒՏՔ</b>          |               | <b>19452</b>    |
|                    | Արարկիի                    |               | <b>2700</b>     |
|                    | Քանաքեռ-Զեյթուն            |               | <b>4095</b>     |
|                    | Մաշտոց                     |               | <b>2250</b>     |
|                    | Շահումյան                  |               | <b>3524</b>     |
|                    | <b>Պոմպ</b>                |               | <b>1070</b>     |
|                    | Մարզեր                     |               | <b>5813</b>     |
|                    | այդ թվում Կոյուղու վթար    |               | <b>113</b>      |
|                    | այդ թվում Դիտահորի խցանում |               | <b>4086</b>     |
|                    |                            |               | <b>Ընդամենը</b> |

ԼՐԱՏՎԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



«Վեոլիա Ջուր» ընկերության կողմից իրականացվող ջրաշինարարական մեծածավալ աշխատանքները զգալիորեն կբարելավեն Երևանի մի շարք համայնքների ջրամատակարարումը:

Մանրամասները՝ տեսանյութում

#ՋրաշինարարականՇրագրեր #ՎեոլիաՂայաստան



www.1lurer.am

YOUTUBE.COM

4 տարվա դադարից հետո Երևանում վերսկսվել է նոր ջրագծերի ու կոյուղատարերի կառուցումը

## Հուլիսին Հանրային կապերի բաժնի /ՀԿԲ/ ուշադրության կենտրոնում են եղել առաջին հերթին ջրաշինարարական աշխատանքները, որոնք

ՎեոլիաԹիմը, օգտվելով եղանակային բարենպաստ պայմաններից, շարունակել է ինտենսիվորեն իրականացնել, ընդգրկելով ինչպես Երևանը, այնպես էլ մարզերը:

«Ջրաշինարարական նոր ծրագրեր Երևանում և մարզերում» խորագրի ներքո հանրությանն է ներկայացվել է մի քանի անուն աշխատանք Երևանի Աջափնյակ, Ավան և Նոր Նորք վարչական շրջաններում: Իսկ մարզերից խոսքը Վեդի, Ապարան, Բերդ, Իջևան, Ճամբարակ քաղաքների, ինչպես նաև Արմավիրի Մրգաշատ, Մյասնիկյան, Բաղրամյան գյուղերի մասին է:


Դավթաշենի, Աջափնյակի ու Մալաթիա-Սեբաստիայի ջրամատակարարումը կդառնա ավելի հուսալի

«Շոր-շոր» ջրաղբյուրի #պլանակայանում երեկ ավարտվեց 315 կ-տ հզորությամբ նոր պոմպի և դրա էլեկտրաշարժիչի մոնտաժումը: Նորագույն այս սարքավորման միջոցով հնարավոր է մղել վայրկյանում նվազագույնը 110 լիտր ջուր: Այն այսօր պահուստային է, քանի որ մյուս պոմպերը լուծում են ջրամատակարարման խնդիրը: Սակայն անհրաժեշտության դեպքում նոր պոմպը կարող է անմիջապես գործարկվել՝ ապահովելով Դավթաշեն, Աջափնյակ ու Մալաթիա... **Տեսել ավելին**



!! Վեոլիա Ջուր ՓԲԸ - Երևանի մարզպետարան համագործակցություն

Նաև Երևանում կլուծվեն խնդիրները՝ քայլ առ քայլ, ձեռք ձեռքի



**ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**  
Հուլիսի 30, ժամը 16:09ին

Երևանի մարզպետ Հովհաննես Զարգոյանյանը

Ընկերության գործարար համբավի բարձրացման համար հատկապես կարևոր նշանակություն ունեցավ 4 տարվա ընդմիջումից հետո Երևանում վերսկսված 850 մլն դրամ արժեքով ջրաշինարարական աշխատանքների լուսաբանումը Հանրային հեռուստալիքի «Լուրեր» ծրագրով:

Պարտադիր Կապիտալ Աշխատանքների Ծրագրով /ՊԿԱԾ/ իրականացվող միջոցառումներից բացի, լայնորեն ներկայացվել են շահագործման տեղամասերի ուժերով կատարվող գործերը, օրինակ, Արթիկ քաղաքում, Բալախովիտ, Արշալույս, Կարբի գյուղերում: Սակայն թերևս հարկ է առանձնացնել մայրուղային ջրատարի նոր հատվածի կառուցումը «Ղազարավան» ջրաղբյուրում, որով ջուր է մատակարարվում միանգամից Արագածոտնի մարզի Կոշ, Շամիրամ, Ուջան, Նոր Եդեսիա, Արագածոտն և Ազարակ համայնքներին, Էջմիածին քաղաքին ու հարակից բնակավայրերին: Հաշվի առնելով, որ ջրամատակարարման և ջրահեռացման բաշխիչ ցանցի արդիականացումը շոշափելի դրական արդյունքների է

բերում, ՀԿԲ-ն իր հաջորդ կարևոր խնդիրը տեսել է այդ մասին հանրությանն իրազեկելը: Այսպես, Արթիկն ու հարակից Նոր կյանք, Վարդաքար, Հովտաշեն և Անուշավան գյուղերը հուլիսին անցան բացառապես լեռներում ենթահունային ջրընդունիչներից ստացվող բարձրակարգ ջրին, շնորհիվ այն բանի, որ տարածաշրջանի բաշխիչ ցանցն այս ընթացքում քայլ առ քայլ զարգացել է, իսկ հոսակորուստները նվազել: Քանի որ արագ արձագանքը վթարներին և դրանց շուտափույթ վերացումը դարձել է ՎեոլիաԹիմի հաստատուն գործելառձք, ՀԿԲ-ն այս ընթացքում անդրադարձել է Երևանի Աջափնյակ վարչական շրջանում, Մարտունի քաղաքում, ինչպես նաև «Գառնի-Լանջազատ» մայրուղային ջրատարի վթարներին, նկարագրելով ինչպես առաջացած խնդիրը, այնպես էլ ջրմուղագործների աշխատանքը, ու այս կերպ թե՛ կանխել սպառողների դժգոհությունը և թե՛ նպաստել ընկերության դրական գործարար համբավին:

Մպատողի կարիքները հնարավորինս լիարժեք բավարարելու համար, ՎեոլիաԹիմը հաշվետու ամսին նաև շարունակել է պայքարը խմելու ջրի ոչ նպատակային օգտագործման, ինչպես նաև ջրագծերի վրա ապօրինի կառուցապատումների դեմ, որոնք հաճախ վթարների են հանգեցնում: Ընդհանուր առմամբ ապահովվել է 4 հրապարակում, այդ թվում ապօրինի ջրագծերը տեխնիկական սարքերի միջոցով հայտնաբերելու հնարավորության մասին: Նույն մտահոգությամբ առաջ-նորդվելով, Վեոլիան «Շոր-շոր» ջրաղբյուրում տեղադրել է նոր հզոր պոմպ, որի շնորհիվ ավելի կայուն է դարձել Երևանի Դավթաշեն, Աջափնյակ ու Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների

#ԱպօրինություններիՂայտնաբերում

Այս տարվա 1-ին կիսամյակում հայտնաբերվել են գրեթե 14 հազար ջրօգտագործման կանոնների խախտման տարաբնույթ դեպքեր, որոնցից շուրջ 950-ը ապօրինի միացումներն են և շրջանցող ջրագծերը:

Դրանց հայտնաբերման գործում հաճախ #ՎեոլիաԹիմին օգնության է զայիս ժամանակակից տեխնիկան, որի օգնությամբ հնարավոր է հայտնաբերել նաև գետնի տակ գտնվող ջրագծերը... **Տեսել ավելին**




!! Այսպես, հայկական կողմը, ի դեմս ՀՀ ՏԿԵ Լաիվարության, իր հերթին, ֆրանսիական կողմը, ի դեմս Վեոլիայի, իր հերթին, բաց համաձայնեցված ծրագրերով համատեղ քայլերով առաջ են շարժվում դեպի ընդհանուր նպատակներ:



**Սուրեն Պապիկյան/ Suren Papikyan**  
Հուլիսի 16, ժամը 11:43ին

11 քաղաքում և 37 գյուղում 100 000 բնակիչ շուրջօրյա ջրամատակարարում կունենա. ներդրել է 81 միլիոն եվրո

ջրամատակարարումը: Այս մասին մեր հրապարակումը ֆեյսբուք սոցիալական ցանցում բավական մեծ հետաքրքրություն առաջացրեց ընթերցողների շրջանում:



Որպես ջրամատակարարման բարելավման ևս մեկ գրավական է ներկայացվել Հայաստանի տեղական իշխանությունների հետ ընկերության սերտացող համագործակցությունը: Մասնավորապես, հրապարակվել են հաղորդագրություններ ՀՀ ՏԿԵ նախարարության կողմից 2021-2023թթ.-ին 81 մլն ԱՄՆ դոլար գումարի ներդրումային ծրագրերի մեկնարկի, «Վեոլիա Ջուր ՓԲԸ - Շիրակի մարզպետարան» համատեղ աշխատանքի և Շենգավիթի վարչական շրջանի հետ Նորագավիթում նոր կողուղագծերի կառուցման մասին:

Ամսվա վերջին ակորդը հանդիսացավ 1944թ. հուլիսի 31-ին գոհված գրող, օդաչու, բանաստեղծ, լրագրող, նկարագարող և փիլիսոփա Անտուան դը Սենտ-Էկզյուպերիի խորունկ մտքի հրապարակումը ջրի մասին, որն ավարտվում է այսպես՝ «Ձո՛ւ ւր ... դու՛՛ հենց կյանքն էս»:

Այս բոլոր հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, [facebook.com/veolia.armenia](https://www.facebook.com/veolia.armenia)-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. [veolia.am](http://veolia.am) պաշտոնական կայքում, [twitter.com/Veolia\\_AM](https://twitter.com/Veolia_AM) -ի և [youtube](https://www.youtube.com/) -ի Veolia Jur էջերում:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



## 5.1. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

● Ամենօրյա ռեժիմով Ընկերության ստորաբաժանուժներից ՈԱԱ բաժնին ներկայացվել են կառուցվածքային ստորաբաժանուժների անձնակազմերի ջերմաչափման և գրասենյակների ախտահանման աշխատանքների վերաբերյալ տվյալները:

● Շարունակվել են Ընկերության ստորաբաժանուժներին տրամադրվել համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցներ:

## 5.2. ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ/ՄԵՄԻՆԱԸՆԵՐ

● Դեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ, 247-րդ և 254-րդ հոդվածների, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Վտանգավոր քիմիական նյութերի տեղափոխում, պահեստավորում և գործածում» ԲՌԿ ստանդարտի պահանջներով և հիմք ընդունելով Ընկերության «Անձնակազմի աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության, մասնագիտական և ադմինիստրատիվ հմտությունների բարելավման մասով ուսուցման, վերապատրաստման և (կամ) որակավորման դասընթաց կազմակերպելու, անցկացնելու, որակավորման վկայականներ տրամադրելու մասին կարգի» պահանջները, բաժնի կողմից Ընկերության Տեխնիկական տնօրինության և ՔևԽՁՄԿ ծառայության թվով 3 աշխատողի համար կազմակերպվեց և իրականացվեց

▶ «Քլոր տեղափոխող մեքենայի վարորդի որակավորման և Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» առկա դասընթաց և գիտելիքների ստուգում

▶ «Վտանգավոր քիմիական նյութերի հետ աշխատանքին ներկայացվող ԲՌԿ ստանդարտի պահանջներ» առկա դասընթացը



● Հիմք ընդունելով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի Գլխավոր տնօրենի կողմից հաստատված «Անձնակազմի աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության, մասնագիտական և ադմինիստրատիվ հմտությունների բարելավման մասով ուսուցման, վերապատրաստման և (կամ) որակավորման դասընթաց կազմակերպելու, անցկացնելու, որակավորման վկայականներ տրամադրելու մասին կարգի» պահանջները, բաժնի կողմից կազմակերպվեց և իրականացվեց «1000կգ և ավել բեռնաբարձությամբ ավտոկռանների վարորդների որակավորման» և «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» առկա դասընթաց և գիտելիքների ստուգում Ընկերության ՔևԽՁՄԿ ծառայության թվով 1 աշխատողի համար:


● Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 13 աշխատողի համար Բաժինը կազմակերպեց և իրականացրեց «Մասնագիտական ռիսկերի արդյունավետ կառավարման գործիքակազմ» դասընթացը: Դասընթացի ավարտին մասնակիցները լրացրեցին 16 հարցից բաղկացած հարցաթերթիկը:





Պետք է նշել, որ վերոնշյալ առկա դասընթացները կազմակերպվեցին COVID-19 համավարակի տարածման դեմ ուղղված սանիտարական կանոնների պահանջներին համապատասխան. դասընթացների մեկնարկից առաջ կատարվեց մասնակիցների հեռավար ջերմաչափում, գրանցում և COVID-19 տարածման կանխարգելման վերաբերյալ սանիտարական կանոնների իրազեկում: Դասընթացների ողջ ընթացքում մասնակիցների միջև պահպանվեց 1,5 մ սոցիալական հեռավորություն, մասնակիցները և դասընթացավարները կրեցին դիմակներ:

**2020-2021թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՅ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ**



**5.3. ԱԻ ՄԱՍՈՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ**


● Համաձայն ՀՀ Շիրակի մարզպետի 29.12.2020թ-ի 429-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ Շիրակի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021թ-ի հիմնական միջոցառումների պլանի պահանջների 2021թ-ի հուլիսի 15-ին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ «Հյուսիս» Շահագործման Տնօրինության «Շիրակ» շահագործման տեղամասի կողմից անցկացվեց հատուկ տակտիկական ուսումնասիրություն «Շիրակի մարզի Գյումրի-Շիրակ ավտոճանապարհի հատվածում «Մարալիկ» 600մմ-ոց ջրատարի վթարի դեպքում վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով: Որի շրջանակներում պատրաստվեցին համապատասխան փաստաթղթեր (Զեկուցագիր, ՀՏՈՒ-ի անցկացման օրացույցային պլան, ՀՏՈՒ-ի անցկացման պլան, ՀՏՈՒ-ի ամփոփագիր) և տրամադրվեցին ՀՀ ԱԻՆ Շիրակի մարզային համապատասխան ստորաբաժանմանը:

## 5.4. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուները, նախօրոք մշակված պլան-ժամանակացույցերի համաձայն, իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 7 (3 քլորակայան, 1 կաթսայատուն, 4 ստորաբաժանում/վարչական շենք) ՀՏԿ-ներում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Ծառայության կողմից ուսուժաստիճան էն Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, էքսկավատորի անվտանգ շահագործման ուղղությամբ:

2021 թ. իրականացված անվտանգության ստուգայցերի քանակներն ըստ օբյեկտների



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ  
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հուլիս ամսվա ընթացքում SS վարչության կողմից իրականաց հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև

- Կասեցվել է “Windows Print Spooler” սերվիսը կազմակերպության բոլոր հնարավոր սերվերներում և համակարգիչներում “CVE-2021-1675” կոդով PrintNightmare - Windows Print Spooler Elevation of Privilege 0 day Vulnerability” տեսակի հնարավոր կիբեռ հարցակման ռիսկի նվազեցման նպատակով:

- “Վեոլիա” Խմբի IT անվտանգության կողմից ձեռնարկված “Top 25” ինդուստրիալ համակարգերի կիբեռ անվտանգության նախագծի շրջանակներում կազմակերպվել է ժողով առկա կարգավիճակի քննարկման և “Themis” համակարգում լրացված հարցաշարի վերլուծության համար:

- 1-85 զանգերի կենտրոնի համակարգի արդիականացման աշխատանքները շրջանակներում կազմակերպվել և անց է կացվել մի շարք ժողովներ քննարկվել են տեխնիկական մանրամասներ և աշխատանքների իրականացման հերթականությունը:

- Կազմակերպվել և անց են կացվել մի շարք ժողովներ կապի ծառայությունների մատակարար կազմակերպությունների հետ կապի ծառայությունների նպատակային օգտագործման և արդիականացման ծրագրի շրջանակներում անցկացվող փոփոխությունների քննարկման նպատակով:

- Մեկնարկվել է ջրաչափերի ցուցմունքների տվյալների հեռահար բոխանցման մրցույթի շրջանակներում, պլանային սարքավորումների տեղադրումը բաժանորդների ջրաչափերի վրա IT բաժնի մասնագետների, Առևտրային տնօրինության և ՋԿԲ աշխատակիցների մասնակցությամբ:

- f Ընկերության կայքում (<https://interactive.vjur.am/>) ավելացվել է նոր հնարավորություն՝ առցանց վճարում կատարելու «Իդրամ» վճարային համակարգի միջոցով:

- “ՎԵՈՒԼԻՍՅԻ ՆՊՍՏԱԿԸ / ՏԱՐԵԿԱՆ ԱՍՓՈՓՈՒՄ” Անցկացվող սեմինարի համար պատրասվել են պաստարներ և իրականացվել է սեմինարի անցկացման տեխնիկական աջակցությունը:

- Իրականացվել է v-office հեռախոսային համակարգի կարգավորումների փոփոխություն ծախսերի նվազեցման նպատակով:

- 1-85 զանգերի կենտրոնի համակարգի արդիականացման ծրագրի շրջանակներում տեղադրվել և կարգավորվել են 2 հատ նոր սերվեր:

- Վերանորոգվել է Աբովյան 62 հասցեում տեղադրված տեսահսկման համակարգը:

- Իրականացվել է vjru.am դոմենի համար OV Wildcard SSL արտոնագրի երկարացման համար անհրաժեշտ կազմակերպության իսկության հավաստման գործընթացը և արտոնագրի տեղադրման տեխնիկական գործընթացը:

- Իրականացվել է Շիրակի 94 հասցեում գտնվող ջրաչափերի լաբորատորիայի խափանված ֆոտոխցիկի վերանորոգումը:

- Իրականացվել է կազմակերպության համակարգերի գաղտնաբառերի քաղաքականության փոփոխություն:

- Մասնակցվել է “Վեոլիա” Խմբի IT անվտանգության բաժնի կողմից կազմակերպված IT անվտանգության խորհրդի ժողովին: Քննարկվել են արդիական SS վտանգները և խմբի SS անվտանգության նախագծերը:

- Ազատ համակարգիչների և մոնիտորների ցանկից առանձնացվել և բաշխվել են սարքավորումների մի մասը: Փոխարինվել են փչացած մոնիտորներ և հնամաշ համակարգիչներ կազմակերպության աշխատակիցների մոտ:

- Իրականացվել է Linux օպերացիոն համակարգով աշխատող սերվերների արդիական թարմացումների տեղադրումը:

- Իրականացվել է Windows օպերացիոն համակարգով աշխատող սերվերների արդիական թարմացումների տեղադրումը:

- Սպասարկվել է մոտ 210 զանգ IT բաժնի աջակցության համարով

- Գրանցվել և փակվել է մոտ 420 աջակցության տոմս



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա  
E-mail: info@vjur.am